ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆՄԵՂ, ԱՆԱՐԱՏ, ԱՆՍԽԱԼԱԿԱՆ, ԱՌԱՆՑ ՆԱԽԱՏԻՆՔԻ
SPECIAL TOPIC: BLAMELESS, INNOCENT, GUILTLESS, WITHOUT REPROACH

Ա. Բացման սահմանումներ

1. Այս հասկացությունը աստվածաբանորեն նկարագրում է մարդու սկզբնական վիճակը (այսինքն՝ Ծննդոց 1, Եդեմի Պարտեզը):
2. Մեղքը և ապստամբությունը թուլացրեցին կատարյալ փոխհարաբերության այս կարգավիճակը (այսինքն՝ Ծննդոց 3):
3. Մարդկությունը (արու և էգ) փափագում է Աստծո հետ իր փոխահարաբերության վերականգնման, քանի որ նրանք ստեղծվել են Նրա պատկերով ու նմանությամբ այսինքն՝ (այսինքն՝ Ծնն. 1:26-27):
4. Աստված մեղավոր մարդկության հետ գործ ունեցավ մի քանի կերպերով՝
   ա. աստվածավախ առաջնորդների միջոցով (այսինքն՝ Աբրահամ, Մովսես, Եսայի)
   բ. զոհաբերության համակարգի միջոցով (այսինքն՝ Ղևտացիների 1-7)
   գ. աստվածահաճո օրինակների միջոցով (այսինքն՝ Նոյ, Հոբ)
5. Ի վերջո Աստված ուղարկեց Մեսիային՝
   ա. որպես Իր իսկ կատարյալ հայտնությունը (տես՝ Հովհ.1:1-14, Կող.1:13-17, Եբր. 1:2-3)
   բ. որպես մեղքի համար կատարյալ զոհ (տես՝ Մարկ. 10:45, 2 Կորնթ. 5:21)
6. Քրիստոնյաները անմեղ են դառնում՝
   ա. օրինական ճանապարհով՝ Քրիստոսի փոխանորդական արդարությամբ (տես՝ Հռոմ. 4:3,6,8, 11,22,23,24, Հակ. 2:23)
   բ. աստիճանաբար Սուրբ Հոգու կատարած գործի միջոցով (Հովհ. 16:8-11)
   գ. Քրիստոնեության նպատակը Քրիստոսակերպությունն է (տես՝ Հռոմ. 8:28-30, 2 Կորնթ. 3:18, Գաղ. 4:19, Եփես. 1:4, 4:13, 1 Թեսաղ. 3:13, 4:3, 5:23, 2 Թեսաղ. 2:13, Տիտ. 2:14, 1 Պետ. 1:15), որը իրականում Ադամի և Եվայի մեջ մարդկության կողմից կորցրած Աստծո պատկերի վերականգնումն է:
7. Երկինքը Եդեմի Պարտեզի կատարյալ փոխհարաբերության վերականգնումն է: Երկինքը Նոր Երուսաղեմն է, որն իջնելու է Աստծո ներկայությունից (տես՝ Հայտն. 21:2) սրբագործված երկիր (տես՝ 2 Պետ. 3:10): Աստվածաշունչը սկսում և ավարտվում է միևնույն թեմաներով:
   ա. Աստծո հետ մտերմիկ, անձնական փոխհարաբերություն
   բ. պարտեզի միջավայրում (Ծննդոց 1-2 և Հայտնություն 21-22)
   գ. մարգարեական խոսքով՝ կենդանիների ներկայությունը և նրանց հետ միասին ապրելը (տես՝ Եսայի 11:6-9)

Բ. Հին Կտակարան

1. Գոյություն ունեն այնքան շատ եբրայերեն բառեր, որոնք կրում են կատարելության, անմեղության, անարատության նշանակությունը, որ դժվար կլինի անվանել և ցույց տալ բոլոր մանրակրկիտ առնչությունները՝ կապերը:
2. Ահա այն հիմնական տերմինները, որոնք կրում են կատարելության, անմեղության կամ անարատության նշանակությունը (համաձայն Ռոբերտ Բ. Գրդլսթոունի, *Հին Կտակարանի Հոմանիշներ*, գրքի, էջ՝ 94-99 /Robert B. Girdlestone, *Synonyms of the Old Testament*/).
   ա. *shalom* (BDB1022, KB 1532)
   բ. *thamam* (BDB1070, KB 1743)
   գ. *calah* (BDB478, KB 476)
3. Մեպտուագինտան (այսինքն՝ առաջին դարի եկեղեցու Աստվածաշունչը) եբրայերեն այս հասկացությունները թարգմանում է Կոյնե Հունարեն տերմինների, որոնք կիրառվում են ՆԿ-ում (տես՝ ցածը Գ. կետը)
4. Հիմնական նշանակությունը կապված է զոհաբերության համակարգի հետ
   ա. *amōmos* (BDB 1071, տես՝ Ելից 29:1, Ղևտ. 1:3,10, 3:1,6, Թվոց 6:14)
   բ. *amiantos* և *aspilus* նաև ունեն հեթանոսական նշանակություն

Գ. Նոր Կտակարան

1. Օրինական հասկացությունը
   ա. Եբրայերենում օրինական հեթանոսական իմաստը թարգմանվում է *amōmos* (BDB 1071, տես՝ Եփես. 5:27, Փիլ. 2:15, 1 Պետ. 1:19)
   բ. Հունարենում օրինական նշանակությունները (տես՝ 1 Կորնթ. 1:8, Կող. 1:22)
2. Քրիստոսն է անմեղ, անբիծ և անարատը (*amōmos*, տես՝ Եբր. 9:14, 1 Պետ. 1:19)
3. Քրիստոսի հետևորդները պետք է հետամուտ լինեն Նրան (*amōmos*, տես՝ Եփես. 1:4, 5:27, Փիլ. 2:15, Կող. 1:22, 2 Պետ. 3:14, Հուդա 1:24, Հայտն. 14:5)
4. Այս հասկացությունը նաև կիրառվում է եկեղեցու առաջնորդների համար
   ա. *anegklētos*, «առանց դատապարտության» (տես՝ 1 Տիմ. 3:10, Տիտոս 1:6-7)
   բ. *anepilemptos*, «քննադատությունից վեր» կամ «առանց նախատինքի» (տես՝ 1 Տիմ. 3:2, 5:7, 6:14, Տիտոս 2:8)
5. «Անարատ» հասկացությունը (*amiantos*) կիրառվում է՝
   ա. Քրիստոսի համար (տես՝ Եբր. 7:26)
   բ. Քրիստոնյայի ժառանգության համար (տես՝ 1 Պետ. 1:4)
6. «Լիարժեքության» կամ «ամբողջականության» հասկացությունը (*holoklēria*) (տես՝ Գործք 3:16, 1 Թեսաղ. 5:23, Հակ. 1:4)
7. «Առանց մեղադրանքի», «անհանցանք անմեղություն» հասկացությունը փոխանցվում է *amemptos* տերմինի միջոցով (տես՝ Ղուկ. 1:6, Փիլ. 2:15, 3:6, 1 Թեսաղ. 2:10, 3:13, 5:23)
8. «Մեղադրանքի ենթակա չլինելու» հասկացությունը փոխանցվում է *amōmētos* (տես՝ 2 Պետ. 3:14)
9. «Անբիծ» «անարատ» հասկացությունը հաճախ կիրառվում է այնպիսի հատվածներում, որտեղ կան վերը նշված տերմիններից որևէ մեկը նույնպես (տես՝ 1 Տիմ. 6:14, Հակ. 1:27, 1 Պետ. 1:19, 2 Պետ. 3:14)

Դ. Եբրայերենում և հունարենում կիրառված բառերի քանակը, որոնք փոխանցում են այս հասկացության իմաստը, ցույց է տալիս դրա կարևորությունը: Աստված հոգացել է մեր կարիքը Քրիստոսի միջոցով և այժմ մեզ կոչ է անում Նրա նման լինելու:

Հավատացյալները պաշտոնապես, իրավաբանորեն՝ դատական կարգով, հռչակված են «ճիշտ», «արդար», «անմեղ» Քրիստոսի գործի շնորհիվ: Այժմ հավատացյալները պետք է գրավեն իրենց դիրքը: «Քայլենք լույսի մեջ, ինչպես Նա է լույսի մեջ» (տես՝ 1 Հովհ. 1:7): «Քայլենք մեր կոչմանն արժանի» (տես՝ Եփես. 4:1,17, 5:2,15): Հիսուսը վերականգնել է Աստծո պատկերը մեր մեջ: Մտերմիկ փոխհարաբերությունը այժմ հնարավոր է, սակայն հիշեք, որ Աստված ուզում է այնպիսի մարդիկ, որոնք այս կործանվող աշխարհում (այսինքն՝ ազգերի մեջ) կարտացոլեն Իր բնավորությունը, ինչպես Իր Որդին արեց: Մենք կանչված ենք սրբության (տես՝ Մատթ. 5:20,48, Եփես. 1:4, 1 Պետ. 1:13-16), Աստծո սրբությանը, ոչ միայն օրինապես, այլ բացառապես: